

# **ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍԻՏՈՒՏ**

**ԶԵԿՈՒՅՈՒՆԵՐԻ  
ԴՐՈՒՅԹՆԵՐ  
(ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս.Գ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ  
90-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ  
ՀԱՄՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ)**

**ԵՐԵՎԱՆ - 2015**

ՀՏԴ 811.19:06  
ԳՄԴ 81.2Հ  
Զ 522

Զ 522 ԶԵԿՈՒՅՈՒՆԵՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ (ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ  
Ս.Գ.ԱԲՐԱՅԱՄՅԱՆԻ 90-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ).-Եր.: Ասոլիկ, 2015.- 56 էջ:

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի գիտխորհրդի  
որոշմամբ: Տպագրության է պատրաստել արդի հայերենի բաժինը:

Ժողովածուն բովանդակում է անվանի լեզվաբան, ԳԱԱ  
ակադեմիկոս Ս. Գ. Աբրահամյանին նվիրված հանրապետական  
գիտական նատաշրջանի գեկուցումների դրույթները:  
Դրանցում ոչ միայն տարբեր կողմերով բնութագրվում են մեծ  
գիտնականի ծանրակշիռ վաստակն ու գիտամանկավարժական  
գործունեությունը, այլև արծարծվում են ժամանակակից հայերենի  
կառուցվածքին, գործառության ու զարգացմանն առնչվող  
տարարնույթ ու տարատեսակ հարցեր, որոնք ունեն ինչպես տեսական,  
այնպես էլ գործական կարևոր արժեք:

ՀՏԴ 811.19:06  
ԳՄԴ 81.2Հ

ISBN 978-9939-50-285-4

© ՀՀ ԳԱԱ Լի, 2015

բացահայտյալ-բացահայտիչ կապակցությունը համադասական է, քանի որ «երկրորդը առաջինի բացահայտումն է այլ բառով կամ այլ կապակցությամբ կրկնելու միջոցով»<sup>7</sup>: Ս. Աբրահամյանը քերում է նմանատիպ օրինակ՝ «Մեր մասնագետներից կազմված արշավախումբը ուղևորվեց դեպի վեցերորդ աշխարհամասը, այսինքն (այն է)` Աստարկության»՝ ընդգծվածները համարելով ստորադասական շաղկապներ<sup>8</sup>: Նա նոյն տեղում նաև շեշտում է. «Դա այդպես է թե նախադասություններ, թե՛ նախադասության անդամներ կապելու դեպքում»: Մինչդեռ նոյն հետինակը մեկ այլ տեղում գրում է. «Ստորադասական շաղկապներն արտահայտում են ստորադասական հարաբերություններ՝ կապելով ստորադաս նախադասությունը գերադասին»<sup>9</sup>: Պետք է նկատի ունենալ նաև, որ ստորադասական շաղկապները կապակցում են միայն բաղադրիչ նախադասություններ, բայց ոչ նախադասության ստվորական անդամներ: Այս առիթով Գ. Զահորյանը գրում է. «Ստորադասական շաղկապները հանդես են գալիս որպես նախադասությունների հարաբերիչներ»<sup>10</sup>: «Ստորադասական շաղկապները .... պարտադրաբար դրվում են դիմավոր բայերի հետ, այսինքն՝ հանդես են գալիս որպես նախադասությունների կապակցության արտահայտիչներ»<sup>11</sup>: Այս բոլոր հակասությունները լուծվում են, եթե նշված բառերը համարվեն բացահայտման վերաբերականներ:

### *Թելյան Լեռնիդ*

(ԵՊՀ)

## **ԲԱԶՄԱԲԱՂԱԴՐԻՉ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ԸՍ Ս. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ**

1. Մեծ է ակադեմիկոս Ս. Աբրահամյանի վաստակը հայերենի շարահյուսական կառուցվածքի քննության բնագավառում. ի շարս շարահյուսական մի շարք իրողությունների, Աբրահամյանի աշխա-

<sup>7</sup> Ս. Ասատրյան, նոյն տեղում, էջ 431:

<sup>8</sup> Ս. Աբրահամյան, նոյն տեղում, էջ 223:

<sup>9</sup> Նոյն տեղում, էջ 215:

<sup>10</sup> Գ. Զահորյան, նոյն տեղում, էջ 450:

<sup>11</sup> Նոյն տեղում, էջ 451:

տություններում առաջին անգամ համակարգային քննության ու դասակարգման են Ենթարկվել բազմաբաղադրիչ (երեք և ավելի բաղադրիչ ունեցող) բարդ նախադասությունները:

2. Հետևողականորեն կիրառելով լեզվական միավորների՝ ըստ անմիջական բաղադրիչների վերլուծության սկզբունքը՝ Ս. Արքահամյանը բազմաբաղադրիչ նախադասությունները բաժանում է երկու՝ համադասական և ստորադասական տեսակների՝ սրանցից յուրաքանչյուրի համար առանձնացնելով համասեռ և տարասեռ ենթատեսակներ։ Տարասեռ կառույցների մեջ զուգորդվում են համադասական և ստորադասական հարաբերությունները. կառույցի գնահատման հիմք է ընդունվում վերլուծության առաջին աստիճանում առանձնացվող միավորների հարաբերությունը, որը գերակա դեր ունի Ենթակադապարային մակարդակում առանձնացվող հարաբերությունների նկատմամբ։ Մրանով իսկ Ս. Արքահամյանը մերժում է «փառը տիպի բարդ նախադասություն» որակումը. «Լեզվի մեջ խառը ոչինչ չկա։ Ամեն ինչ օրինաչափական է»<sup>12</sup>:

3. Բազմաբաղադրիչ ստորադասական նախադասությունների՝ Ս. Արքահամյանի կողմից առանձնացված համաստորադասական, ենթաստորադասական և տարաստորադասական ենթատեսակները հետագայում համընդիանուր ընդունելության են արժանացել և ներկայացվում են բարդ նախադասությունը քննող մասնագիտական գրականության մեջ։ Սակայն բազմաբաղադրիչ համադասական կառույցների բնութագրման՝ Ս. Արքահամյանի սկզբունքը, կարծում ենք, բավարար կիրառություն չի առացել։ Մասնակորապես շարականագիտական աշխատանքներում ներկայացվող՝ երկու և ավելի համադաս բաղադրիչներին ստորադասված ընդիանուր երկրորդական(ներ)ով կառույցները, որ քննվում են ստորադասականների շարքում («հանրաստորադասություն» անվանումով), իրականում համադասական կառույցներ են։ Դրանք անվանելու համար թերևս պետք է ընդունել Ս. Արքահամյանի առաջարկած «բարդ ստորահամադասական նախադասություն» տերմինային բնորոշումը։

<sup>12</sup> Ս. Արքահամյան, *Հայոց լեզու*, Ե., 2004, էջ 107: